

Բույսեր, բուսական ապրանքներ կամ այլ պարագաներ արտադրողների նկատմամբ գործող պարտականություններ եւ դրանց գրանցման մասին մանրամասն տվյալներ սահմանող՝ Հանձնաժողովի 1992 թվականի նոյեմբերի 3-ի 92/90/ԵՏՀ հրահանգ

Պաշտոնական տեղեկագիր, L 344, 26.11. 1992թ., էջեր 0038 - 0039

Ֆիններեն հաղուկ հրատարակություն. Գլուխ 3, հատոր 46, էջ 0042

Շվեդերեն հաղուկ հրատարակություն. Գլուխ 3, հատոր 46, էջ 0042

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Հանձնաժողովի 92/10/ԵՏՀ հրահանգով¹ վերջին անգամ փոփոխված բույսերի կամ բուսական ապրանքների համար վնասակար օրգանիզմները Համայնք ներկրումից եւ Համայնքում դրանց տարածումից պաշտպանիչ միջոցառումների մասին Խորհրդի՝ 1976 թվականի դեկտեմբերի 21-ի 77/93/ԵՏՀ հրահանգը², եւ, մասնավորապես, 6 (7) հոդվածի չորրորդ պարբերություն ու 6 (8) հոդվածը,

քանի որ Համայնքի բույսերի առողջության պահպանման համակարգի կիրառումը Համայնքում որպես առանց ներքին սահմանների տարածք կպահանջի Համայնքի՝ բույսերի առողջապահական տեսանկյունից խնդրահարույց ապրանքներում ընդգրկված բույսերի առողջության ստուգումների անցկացում՝ նախքան դրանց տեղափոխումը Համայնքի տարածքում. քանի որ այս ստուգումների անցկացման ամենահարմար վայրը պաշտոնական ռեգիստրում նշված արտադրողի արտադրության վայրն է,

¹ ՊՏ թիվ L 70, 17. 03. 1992թ., էջ 27:

² ՊՏ թիվ L 26, 31. 01. 1977թ., էջ 20:

քանի որ Խորհրդի 77/93/ԵՏՀ հրահանգում նշված վնասակար օրգանիզմների կողմից չվնասված կամ չվարակված բույսերի, բուսական ապրանքների կամ այլ օբյեկտների արտադրության եւ անդամ պետությունների կողմից այդ արտադրության պատշաճ դիտանցման նպատակով անհրաժեշտ է սահմանել ցանկում ընդգրկվելու ավելի շատ կանոններ այն արտադրողների կամ այլ անձանց առումով, ում համար պետական ռեգիստրի ցանկում ընդգրկվելը պարտադիր է, ինչպես նաեւ մանրամասն նկարագրված եւ այնպիսի միասնական պարտականություններ, որոնք պետք է կիրառվեն բույսեր, բուսական ապրանքներ կամ այլ պարագաներ արտադրողների նկատմամբ, եւ քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են Բույսերի առողջության հարցերով մշտական կոմիտեի կարծիքին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Անդամ պետություններն ապահովում են, որ ցանկացած արտադրող, ընդհանուր պահեստ, առաքման կենտրոն, այլ անձինք կամ ներմուծողները, որոնց վրա տարածվում է 77/93/ԵՏՀ հրահանգի համապատասխանաբար 6 (4) հոդվածի երրորդ ենթապարբերությունը, 6 (5) հոդվածը, 10 (3) հոդվածի երկրորդ պարբերությւը կամ 12 (6) հոդվածի երկրորդ ենթապարբերությունը, գրանցման համապատասխան ընթացակարգի համաձայն պաշտոնական ռեգիստրում ընդգրկվելու դիմում ներկայացնեն 77/93/ԵՏՀ հրահանգում նշված պատասխանատու պաշտոնական մարմիններին:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ 1-ին պարբերությունում նշված դիմումն ստանալուն պես տվյալ պատասխանատու պաշտոնական մարմինները գրանցեն այն դիմումների պաշտոնական ռեգիստրում եւ ստուգեն դիմումի մեջ լրացված տեղեկությունները:

3. Տվյալ պատասխանատու պաշտոնական մարմինները մուտքագրում են 1-ին պարբերությունում նշված յուրաքանչյուր արտադրողի, ընդհանուր պահեստը, առաքման կենտրոնը, այլ անձանց կամ ներմուծողներին նույն

պարբերությունում նշված պաշտոնական ռեգիստրում անհատական գրանցման համարի ներքո՝ հնարավոր դարձնելով դրանց համապատասխան նույնականացումն այն պահից, երբ նշված պաշտոնական պատասխանատու մարմինները հաստատում են, որ տվյալ արտադրողը, ընդհանուր պահեստը, առաքման կենտրոնը, այլ անձինք կամ ներմուծողները կարող են ել ցանկանում են կատարել 2 (2) հոդվածում սահմանված եւ 2 (3) ու 3-րդ հոդվածներում նշված պարտականությունները:

4. Այն դեպքերում, երբ 2-րդ պարբերությունում նշված ուսումնասիրությամբ սահմանվել է, որ 2 (2) հոդվածում նշված պարտականությունները չեն կատարվելու, տվյալ պատասխանատու պաշտոնական մարմինները չեն ընդգրկում արտադրողին, ընդհանուր պահեստը, առաքման կենտրոնը, այլ անձանց կամ ներմուծողներին 1-ին պարբերությունում նշված պետական ռեգիստրում, քանի դեռ 3-րդ պարբերությունը չի կիրառվում:

5. Անդամ պետություններն ապահովում են, որ ցանկը համապատասխանաբար փոփոխվի կամ թարմացվի, եթե 1-ին պարբերությունում նշված արտադրողը, ընդհանուր պահեստը, առաքման կենտրոնը, այլ անձինք կամ ներմուծողները որոշում են այն գործունեությունից բացի, որի համար նրանք ի սկզբանե ընդգրկվել են ցանկում, ծավալել նաեւ այլ գործունեություն:

6. Անդամ պետություններն ապահովում են, որ նշված պատասխանատու պաշտոնական մարմինները ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ, եթե 2 (2) հոդվածում, եւ համապատասխան դեպքում, 2 (3) եւ 3 հոդվածներում նշված պարտականությունները չեն կատարվում:

7. 6-րդ պարբերության համաձայն ձեռնարկվող ցանկացած միջոց չեղյալ է համարվում այն պահից ի վեր, երբ հաստատվում է, որ արտադրողը, ընդհանուր պահեստը, առաքման կենտրոնը, այլ անձինք կամ ներմուծողները հետագայում հավանաբար կբավարարեն սույն Հրահանգի պահանջներն ու պայմանները:

Հոդված 2

1. Անդամ պետություններն ապահովում են, որ 1-ին հոդվածում նշված գրանցման ընթացակարգի համաձայն, ցանկացած համապատասխան արտադրողի, ընդհանուր պահեստի, առաքման կենտրոնի, այլ անձանց կամ ներմուծողների վրա տարածվեն 2-րդ պարբերությամբ սահմանված պարտականությունները՝ չհակասելով 3-րդ պարբերությունում եւ 3-րդ հոդվածում նշված պարտականություններին:

2. Չհակասելով 77/93/ԵՏՀ հրահանգում արդեն նշված պարտականություններին՝ 1-ին պարբերությունում նշված պարտականությունները հետեւյալն են՝

ա) պարբերաբար թարմացնել այն տարածքների նախագիծը, որտեղ բույսերը, բուսական ապրանքները կամ այլ պարագաներ աճում են, արտադրվում, պահեստավորվում, պահպանվում կամ օգտագործվում 1 (1) հոդվածում նշված արտադրողի, ընդհանուր պահեստի կամ առաքման կենտրոնների, անձանց կամ ներմուծողների կողմից, կամ առկա են այնտեղ այլ նպատակով,

բ) վարել գրանցամատյան՝ նշված պատասխանատու պաշտոնական անձանց համար ամբողջական տեղեկություններ ունենալու նպատակով այն բույսերի, բուսական արտադրանքի կամ այլ պարագաների մասին, որոնք

— ձեռք են բերվել տարածքներում պահեստավորման կամ տնկման նպատակով,

— գտնվում են արտադրման փուլում, կամ

— առաքվել են այլ անձանց,

եւ առնվազն մեկ տարի պահպանել դրանց վերաբերյալ փաստաթղթերը,

գ) հասանելի լինել անձամբ կամ նշանակել բույսերի արտադրության մեջ կամ բույսերի առողջությանը առնչվող հարցերի առումով գործնականում փորձ ունեցող այլ անձի՝ նշված պաշտոնական պատասխանատու մարմինների հետ կապ պահպանելու նպատակով,

դ) իրականացնել արտաքին գննում՝ ըստ անհրաժեշտության եւ համապատասխան դեպքերում նշված պատասխանատու պաշտոնական մարմինների կողմից տրված ուղեցույցում նշված հրահանգներով սահմանված կարգով,

ե) նշված պատասխանատու պաշտոնական մարմինների փոխարեն գործելու իրավունք ունեցող անձանց համար ապահովել (բ) կետում նշված գրառումներից եւ առնչվող փաստաթղթերից օգտվելու հնարավորություն՝ մասնավորապես ստուգման եւ (կամ) նմուշառման նպատակով,

զ) այլ կերպ համագործակցել նշված պատասխանատու պաշտոնական մարմինների հետ:

3. Կարող են սահմանվել ընդհանուր բնույթի հավելյալ պարտականություններ՝ տարածքներում բույսերի առողջության գնահատումը հեշտացնելու նպատակով. դրանք պետք է լինեն ազգային իրավունքի շրջանակներում եւ դրանք սահմանելիս կարող է հաշվի առնվել արտադրության մասին մանրամասն տվյալները եւ, անհրաժեշտության դեպքում, ներմուծման պայմանները՝ մասնավորապես մշակաբույսի տեսակը, գտնվելու վայրը, չափսը, վերահսկումը, անձնակազմն ու սարքավորումները:

Հոդված 3

Ցանկում ընդգրկված արտադրողը, ընդհանուր պահեստը, առաքման կենտրոնը, այլ անձինք կամ ներմուծողները նշված պաշտոնական պատասխանատու մարմինների պահանջով բավարարում են տարածքներում բույսի առողջության վիճակը գնահատելու կամ բարելավելու եւ նյութի համապատասխանությունը վերահսկելու առումով պարտականությունները, նախքան բույսին կկցվի անձնագիր՝ 77/93/ԵՏՀ հրահանգի 10 (2) հոդվածի համաձայն. այս հատուկ պարտականությունները կարող են ներառել հատուկ գննման, նմուշառման, մեկուսացման, նախնական մշակման, բուժման, ոչնչացման եւ մակնշման (պիտակավորման) գործառույթներ, ինչպես նաեւ ցանկացած այլ միջոց, որը, ըստ անհրաժեշտության, հատուկ պահանջվում է 77/93/ԵՏՀ հրահանգի IV հավելվածի Ա մասի II բաժնով կամ IV հավելվածի Բ մասով:

Հոդված 4

Անդամ պետություններն ապահովում են 2 (2) հոդվածում նշված պարտականությունների կատարումը՝ գրառումները եւ առնչվող փաստաթղթերը պարբերաբար՝ առնվազն տարին մեկ անգամ ուսումնասիրելու միջոցով, ինչպես նշված է 2 (2) (բ) հոդվածում:

Հոդված 5

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը Խորհրդի 91/683/ԵՏՀ³ հրահանգի 3 (1) հոդվածում նշված օրը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Եթե անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, ապա դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

3. 3Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են ներպետական իրավունքի բոլոր այն դրույթների մասին, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում: Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին:

Հոդված 6

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին: Կատարված է Բրյուսելում, 1992 թվականի նոյեմբերի 3-ին: Հանձնաժողովի կողմից՝

Ռեյ ՄԱԿ ՇԱՐԻ

Հանձնաժողովի անդամ

³ ՊՏ թիվ L 376, 31. 12. 1991թ., էջ 29: